



ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՑ

Լ. ԱԶԵՄՅԱՆ

(Հայրենադարձ մտավուական)

ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՊԱՀԵՐ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԱՆՈՑԻՆ ՄԵԶ

Ես շատոնց և բազմիցս իմացածէի, թե հայոց արդի ազգընտիր Հայրապետը այն անձնէ, որ կրցեր է համապար գործքով՝ արտահայտել, որովհետև նորին Վեհափառության խոր համոզումն է, թե եկեղեցին ինքնին նպաստակ չէ, և ան կրաքրի եկեղեցի ըլլալե, եթե չի ժառայեր ժողովրդի շահերոն, որ նույն ատեն հայրենիքի շահը ըսել է: Դեռ Եպիպոս եղած ատենս, ես լսեր էի իր իմաստուն նախաձեռնության մասին, որով ան կարողացած էր, նոր կարգերու ու նոր ժամանակներու վերանորոգման պետք ունեցող Հայրապետական Աթոռի, Հայոց եկեղեցական-վարչական կեդրոնի գոյությունը զարթոնքի ճանապարհին վրա դնել:

Ուստի և մեծագույն փափաքս էր, Հայրենիք վերադարձես հետո, առիթով մը ներկայանալ նորին Վեհափառություն Գեորգ Զ. Հայրապետին, առնելու համար իր աշը և հայտնելու գգացումներս իր կատարած բարձրորդեն զնահատելի գործի մասին, մտածելով՝ որ ատիկա կրնա նաև արտահայտությունը սեպիլ զգացումներուն արտասահմանյան հայության ստվարագույն մասին, որոն սըրտին ու գիտակցության մեջ այնքան լայն տեղ է գրաված Հայոց Հայրապետությունը: Էջմիածին է՛ և կմնա իբրև հայոց կրոնա-վարչական կեդրոն և մխիթարության սրբատեղի:

Տիկնոջ Հետ միասին դեկտ. 25-ին ուղելուրվեցանք դեպի Էջմիածին, որոն հեռավորությունը այժմ վերածված է 30—35 րոպեի, շնորհիլ ասֆալտապատված լայն և փեղեցիկ ճանապարհին, որ Հայրաստանի այդ շոշանները կկապէ մայրաքաղաքին:

Մոտ 43 տարի առաջ էր, որ առաջին անգամը ըլլալով, ես անցած էի այս ճանապար-

հեն, դարձյալ էջմիածին երթալու համար: Խարխած ֆուտկոն մըն էր այս ժամանակ մեզ տանողը խորտուգորտ այս ուղին, ուր փողին մարդ կիսեղեքը: Այժմ մարդատար ու բեռնատար անթիվ ինքնաշարժներ են, որ կրեցնեն այս սքանչելի ծառուղին, որուն երկու կողմերը պարտեզներու և այգիներու ընդարձակ տարածություններ են գրաված, ազժմ ծյունածածկ, որոնք դեռ նոր վերջացած եռուն աշխատանքնեն կհանգստանան՝ կարճ ատեն հետո նոր ովորությամբ կյանք և հրապուր ընծայելու համար երկրի զավակներուն: Քիչ հետո, ճանապարհի երկու կողմի վրա, ծառաշատ պարտեզներու կամ այգիներու եզերքը, ճաշակավոր վիլաներու շարքեր կսկսին որոշ հեռավորությամբ:

— Ներգաղթողներու հատկացված տուններ են,— կսե ուղեկիցս: Կնայիմ ուշադրությամբ պատուհանները ծածկված են ճերմակ, մաքուր վարագույններով: Խնամուտ ծեռքերու ներկայացությունը ակներև է: Վերադարձին պիտի տեսնեինք, որ բոլոր տուններն ալ էլեկտրական լուսով ողորված են:

Բայց ահա արդեն էջմիածին ենք: Մեր ճամբան կանցնի Հոփիսիմեի տաճարին առցենն, որ հիմա շրջապատված է նոր թաղամասերով, մինչ առաջ բաց դաշտի մեջ էր ան: Ո՛չ, էջմիածինը այժմ նախկին գյուղը չէ: Աւան ու ասփալտապատ փողոցները, հայկական ճարտարապետությամբ կառուցված և էլեկտրականությամբ լուսավորված բազմաթիվ գեղեցիկ տունները կմկայեն՝ թե ան արդեն քաղաք մըն է, կմկայեն՝ թե հայրենի հարազատ ու շինարար ձեռք մը մոգական գալագանի հպումով մը վերափոխած, շենցուցած է նախկին խեղճ ու կրակ, հողաշեն ու փոշեթաթախ Վաղարշապատը:

Վայրկյան մը վերջը, վանքին առջևն ենք: Բայց մի՞թե: Հապա ո՞ւ է այն հրապարակը, որ գյուղը կանչատեր վանքեն: Ժամանակը և բնակչության աճը լցուցած են այդ տարածությունը. վանքը այժմ քաղաքին մասը կկազմե, անոր մեջն է: Ու միթե շիտակ չէ, որ ժողովրդին սպասարկող հիմնարկություն մը ժողովրդին հետ և անոր մեջ գտնվի:

Ժամը գրեթե մեկն է և պատարագը դեռ ավարտած չէ: Վեհափառը, անշուշտ, տաճարը իշած կը լլա: Կուղղվինք դեպի այդ կողմը: Հարկ կա բացատրելու այն զգացմունքները, որ կհորդին մարդուն ներս եր, երբ ինքզինքը կգունե այնքան հիշատակներով ծանրաբեռն հայրենի սրբատեղի մը մեջ էշմիածին... 16 դարերու սուրբ հիշատակարան, խորհուրդ հայ ոգիին, ներշնչարանը ապագային նկատմամբ սնուցված ամրակուու հավատքին, նաև վկա մեր եկեղեցավոր քաղաքական կյանքին:

Էշմիածինը կպահէ հին ավանդությունը. տաճարը նստարաններ չունի, գետինը գորգերով կծածկվի: Պատերը վերջերս ապիտակ ծեփված են ներսեն, սակայն այդ ծեփը չէ հանդունած քարձրանալ մինչև կամարները ու առաստաղը, շմասելու համար հին նկարներուն, որոնք արժեքավոր նմուշներ են մեր որմնանկարության: Արարողությունները կիառարկվին երգեհոնի ընկերակցությամբ: Ներդական է կոկիկ քազմություն մը:

Ահա՝ կաթողիկոսական սպանչելի Աթոռ. Հոն է Հայոց եկեղեցին պետք էշմիածնի գահակալը իր պարթեավ հասակով: Քովիկը կիայլի Հայրապետական Ասան իր արծաթյա զու զուփովէ: Ազ ու ծախ դասերու մեջ էշմիածնի միաբաններն են կանգնած: Անոնց մեջ են հրանեն վերապարձած երկու առաջնորդները: Պարսից կառավարությունը արդիւ լած է անոնց առաջնորդական պաշտոն վարել իրանի մեջ որպես օտարահպատակներ՝ ի նշան... կրոնական ազատության: Այս կապացուց այն, որ իրանի կառավարությունը նորեն վերադարձեր է հայերու վերաբերյալ կրոնական հարածամքներու քաղաքականության Պարսկաստանի մեջ: Արդյոք շեն հղած հայ դավաճան մարդիկ, որ մաս ու բաժին ունենային էշմիածնի իրավասության հասցված այս հարգածին մեջ...

Ու մինչ եկեղեցական արարողությունները կկատաֆին փառավոր ու հոգեզմայլ, ամբողջ 16 դարերու պատմությունը կվերհառնու մտքիս մեջ: Մեկ ավելի արքայական հարստություններ, բազմաթիվ նախարարական տուններ եկան ու անցան, բայց մնաց էշմիածինը: Կիսավայրենի ժողովուրդներու անթիվ ոհմակներ, հսկա, ավելի հեղեղներու

պես եկան, բախեցան այս տաճարի որմերուն, փշրվեցան ու կորան, բայց ան մնաց անսասան, որովհետև մնաց հայը իր աննվաճ ոգիովը, նոր ու պայծառ օրերու հասնելու իր անմեռ հավատքովը: Եվ արդեն էշմիածինը այդ ոգիին ու այդ հավատքին մարմնավորումը չէ միթի:

Բայց եկեղեցական արարողությունը դեռ պիտի երկարի. Կորոշենք օգտագործել առիթը և որիշ տեղեր այցելել: Կուղղվինք դեպի Հոգեվոր Ճեմարանը, ուր տեղավորված է «Էշմիածին» ամսագրի խմբագրատունը: Կայցելենք Ճեմարանի Տնօրեն տիար Մ. Մինասյանին: Մենք իրարու հետ եղած ենք Պոլիս, նաև Ուրֆա: Անկից իմկը մենք իրար կորանցուցած էինք, բայց ոչ հիշատակը տիսուր օրերու մեջ լավ բարեկամության: Ան առաջինը կճանշնա զիս: Ու կրացվին պատմության ծրաբները արյունու օրերուն: Կտեղեկանամ Ճեմարանի կացության մասին: «Այժմ, կըսի Տիար Մինասյան, Հոգեվոր Ճեմարանը շնորհալի ուսանողներ ունի: Անոնցմբ հինգ հոգի ինքամատուց եղած էին սարկավագ Ճեմարանի վելու, բայց Վեհափառ Հայրապետը, ժամանակ տալու համար / հետաձգեց, որ իրենք լավ խորհին ընտրվելիք ասպարեզին մասին և ինքն ալ ճանշնա զանոնք: Տարի մը հետո, երբ անոնք ցուցաւին իրենց հաստատակամությունը և լավ վարքը, որոր միայն սարկավագ Ճեմարանը վեցանա:

Ժամը երկուքն է, երբ կառաջնորդվինք Վեհարանը, Մաղկյա Դահլիճին կից փոքր սենյակը, ուր Վեհափառին հետ կգտնենք նաև Թեհրանի նախկին առաջնորդը: Մրտիս արուժուար թերւա կնշամրվի երեսիս վրա, աշքերուա կամ ափերուս մեջ. ես շատ եմ հուզված: Ամենայն Հայոց Հայրապետի ներկայության կգտնվիմ, անոր աջը կհամբուրեմ Կաշարվինք սեղանի շուրջը: 43 տարիներ առաջ անգամ մը նորեն եղած եմ այս կամարներուն տակը: Խորմյանի վերջին տարին էր: Ան պառփած էր զահավորակի մը վրա և իր դեմքի ու մազերու ճերմակությունը խառնը ված էր բարձի և սավանի սպիտակության հետ: Բարեբախտաբար, առողջ և առուց կգտնեմ Զորեքշյան Վեհափառը, հակառակ իր ուսերուն վրա ծանրացոր 80 տարիներու թերին: Իր առաջին բաներին իսկ կըմբռնեմ, թե կգտնվիմ հանդեպ բանիբուն Հովհապետի մը խորաթափանց, շրջանկատ և կշուռադառող անցյալը ներկային կապող և դեպի լուսավոր ապագան աներկմիտ հավատքով նայու: Վեհափառը նաև հածելի խոսակից մըն է, լավ վապես ուսումնասիրած իր հուն ու անոր կարիքները, ծանոթ դեպքերու ու դեմքի-

րուն, ծանոթ՝ արտասահմանյան դժվարություններով, հանգամանքներուն և այդ պատճառով ալ զգուշակոր ու խոհական, որ շահապարեր իր որոշումներուն մեջ, սկզբունքը ընտրած ըլլալով՝ հակար շափել, բայց մեկ կտրել: Ան կտրել լսել և լուսաբանվիլ:

Վեհափառը կցուրասիրեր մեղմ ճաշի ընթացքին մենք կը բողոքնենք էջմիածնի անսապակ գինին: Արևելահայոց հնավանդ ու սիրական սովորությունն է բաժականառը: Վեհափառ Հայրապետը առաջինը ինքը կը լա բաժակ առաջարկողը ժողովուրդներու հոչականուն առաջնորդ Մեծ Ստալինի կենացը, որու ծննդյան 70-ամյակի հանդիսություններու նոր վերջացած էին էջմիածնի շրջաբակին մեջ: Հաճույքով կտեղեկանանք այս առիթով թե՝ Վեհափառ Հայրապետը շնորհավորական հեռագիր մը ուղած է Սովետական Միության Կառավարության իմաստուն Առաջնորդին, ակնարկությամբ հանդերձ արևմտահայոց ակնկալությանց: Վեհափառը մեղ կպատմե նաև 4—5 տարի առաջ Սովորայի մեջ տարած աշխատանքի, Մեծ Ստալինի հետ տեսակցության և անոր մատուցած իր հիշատակագրի մասին, որու վրա Սովետական ժողովուրդներու Առաջնորդը իր ձեռագիրով մակագրած է:

Բոլոր ժամանակներու հրովարտակներին շատ ավելի մեծ կարևորություն ունեցող այս փաստաթուղթը, Վեհափառը զետեղած է սքանչելի պահպանակի մը մեջ, որոն արտաքին կողքը կզարդար արծաթյա բլակ մը հայկական գարդանկարշությամբ շրջանակված, ճակատին վրա սիրելի Առաջնորդին սատափիա նկարովը:

Բաժականառերը իրարու կհաջորդեն. բոլորին առանցքն է Վեհափառին կատարած դերը և էջմիածնի զարդումը:

Գիտեմ թե արտասահմանը ի՞նչքան կհետաքրքի մյուսունօրնենքով և ո՞րքան հայրենաբաղդ հոգիներ կսպասեն այդ առիթով այցելել Հայաստան: Այս մասին իմ ըրած հարցման պատասխան կստանամ թե՝ կնախատեսվի: Հառաջիկա տարին կատարել սպասված այս հանդես-ալրարողությունը, եթե արտասահմանյան հանգամանքները բարենպաստ ըլլան, ինչպես կուսա ինք՝ Վեհափառը: Ժամանակը կոնկրետ որոշված չէ:

Որպես նոր հայրենաբարձ, որուն անծանոթ չեն դրսի հանգամանքները, հարց կուտամ թե արտասահմանյան թեմերը կկատարե՞ն արդյոք իրենց պարուականություններն ու պարտավորությունները հանդեպ Մայր Աթոռին: Ցավով և ամոթով կտեղեկանամ թե՝ այդ պարտականություններն ու պարտավորությունները գոհացուցիչ չեն եղած երբեք, մինչ

անոնց ակնկալությամբ հոս ձեռնարկած են գործերու, որոնք սաստկապես պիտի վնասվին, եթե շարունակվի այս ընթացքը:

Համոզված ըլլալով թե երուսաղեմի պատրիարքական ընտրության խնդիրը օրվան կարեվոր հարցն է արտասահմանյան ազգային շրջանակներու համար, կուգեմ տեղեկանալ՝ թե ի՞նչ կիսորհի այդ մասին Հայ Եկեղեցիի ընդհանրական Պետք, նկատի առնելով Երուսաղեմի միաբանության խիստ անբավարար թիվը, ինչպես նաև Պաղեստինի հիմնովին փոխակերպված գոյավիճակը, որուն հետ կապված է նոր ընտրվելիք Պատրիարքին վավերացման խնդիրը: Վեհափառը խորապես ծանոթ է Երուսաղեմի, մանավանդ վերջին քանի մը տասնամյակներու անցուդրածքուն: Ան ունի իր տեսակետներն ու ծրագիրը, որոնց գործադրության համար կարծե թանկագին աշակից մը ունենալ իրեն, հանձին Կիրիկիո շնորհազարդ Կաթողիկոսին, որուն խոհական ընթացքին մասին այնքան գնահատանք ունի ինքը: Ինչ կվերաբերի վավերացման խնդիրին, Վեհափառը ցավով կնշե նախորդ պատրիարքներին միուն ընթացքը՝ էջմիածնի հոպավունքը ընդունելու և օտարին նախարարատվություն տալու ուղղությամբ, և կհուսա հառաջիկային սրբագրված տեսնել այդ սխալը: Նախի էջմիածնին, ապա՝ օտարը, եթե հարկ կա:

Կհարցնեմ եկեղեցական բարեկարգության խնդիր մասին, որ իր ընտրության առիթով ևս ծեծվեցավ արտասահմանյան լրագրության մեջ, և կտեղեկանամ թե Մայր Աթոռի ուղարգության կեդրոնի մեջ է ան:

Ակնարկելով իր մոտավոր 80-ամյա Հոբելյանին, որուն համար արդեն պատրաստություններ սկսված են տեսնվիլ այստեղ, կհավաստեմ թե ատիկա պիտի ըլլա միահիմքության և ուրախության առիթ արտասահմանի հագատացյալ բազմություններու համար, ինչպես նաև նոր ապացուց բարվոք հարաբերության ընդմեջ Հայկական ՍՍՌ Կառավարության և Մայր Աթոռի, բայց կհարցնեմ: «Արտասահմանը պիտի կարենա» շոշափելի արդյունքով իր սերն ու հարդանքը հայտնել հանդեպ Մայր Աթոռին: Վեհափառը համաձայն է, որ Հոբելյանը ըլլա այդ բաղաձալի առիթոք, բայց թե ամեն բան իրմե կախում չունի: Իրմե կախում չունի, անշուշտ, որ ուրսի մեր բազմությունները ընեն իրենց կարելին՝ արդյունավոր և հիշատակելի ընծայելու համար այդ առիթը: Այդ կախում ունի դուրս տարվելիք աշխատանքն, առաջնորդներն և ազգային հաստատություններն, նաև հանրային մարմիններն, մամուլն ու մտավորականութենեն: Պետք է հիշել

ալս առիթով՝ թե ի՞նչ գեր խաղացած է էջմիածինը անցյալի մեջ, թե ի՞նչ հսկայական զոհողություններ կատարած է ան դարմանելու համար արևմտահայ կարոտությունները և թե ի՞նչքան կարևոր է անոր գոյությունն ու պայծառությունը ներկայիս իրենց համար, նաև ապագայի համար։ Արտասահմանյան մեր գաղութիւնները, — ու ես կուգեմ զորավոր շեշտ դնել արտասահման բառին վրա, որով հետեւ երկրի հայությունը իր հարազատ պետության հոգը սնի ստանձնած, — լիովին ի վիճակի են պակելու Մայր Աթոռի արդար ակնկալությունը, մշտնշենավորելու համար գոյությունը հշման Խորանին առցե առկայծող կանթեղին, որովհետեւ «հաւասար առանց դործոց մեռեալ են»։

Մեր խոսակցությունը կընդարձակվի, անցնելով գաղութե գաղութ, դեպքե դեպք։ Համախ անցյալն է, որ կվերակենդանանա իր ստվերու և հուսունշուլով լուսավորված երեսներով, բայց ավելի շատ ներկան, և մանավանդ մեր ժողովրդի ապագան է, որ կոփեվորի մեզ, Վեհափառը խանդավառությամբ կարտահայտվի հայրենի կառավարությանց ձեռնարկած հսկայական շինարարությանց

մասին, ներգաղթի մասին, որ կհավաստե պիտի շարունակվի, ու կանգ կառնե վերաբ րոգության խնդրի վրա Մայր Տաճարին, այլևս օրվան խնդրի պետք է համարել, նկատի ունենալով ձեռնհաս ճարտարապետական բու եղբակացությունը. ու սրտի մեծ գոհուն կոթյամբ կհայտնե թե արդեն գտած է մանոն բարեսեր մը, որում հետ վերջնակ խոսակցությունները տեղի կունենան ներկյիս, հարթելու համար կամքե անկախ դժվարություն մը։ Այս լուրջը բերկրանքի առիթ պիտի ըլլա անշուշտ բոլորին համար, նոր պացուց մը՝ թե հայ ժողովրդին մեջ կշարունակվի հայրենասեր բարերարներու ավագությունը։

Ուշ գիշեր է, երբ հրաժեշտ կառնենք Ընհանրական Հայրապետեն, Եղմիածնի հայրագորով Աթոռակալեն և մեծ վերանորոգիչե Մեր ինքնաշարժը կուրա Արարատյան դատի վրա օրհնության պես իջնող ձյունի ընդհեծն։ Ճամբռու վրա, հրաշեկ աշքերնին բար կուրան դարձյալ ինքնաշարժներուն շարադարձուները, ու քիչ հետո լուսի ծով մը՝ պըսպանող բյուր ալլակներով։ Երևան ենք, միա սքանչելի երևանը։

